



**Համարը** N 591-Ն

**Տիպը** Որոշում

**Սկզբնաղբյուրը** ՀՀՊՏ 2007.06.06/29(553)

Հոդ.693

**Ընդունող մարմինը** ՀՀ կառավարություն

**Ստորագրող մարմինը** ՀՀ վարչապետ

**Վավերացնող մարմինը** ՀՀ Նախագահ

**Ուժի մեջ մտնելու ամսաթիվը** 16.06.2007

**Տեսակը** Ինկորպորացիա

**Կարգավիճակը** Գործում է

**Ընդունման վայրը** Երևան

**Ընդունման ամսաթիվը** 17.05.2007

**Ստորագրման ամսաթիվը** 23.05.2007

**Վավերացման ամսաթիվը** 26.05.2007

**Ուժը կորցնելու ամսաթիվը**

**+** Կապեր այլ փաստաթղթերի հետ

**+** Փոփոխողներ և ինկորպորացիաներ

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*«Վավերացնում եմ»*  
Հայաստանի Հանրապետության  
Նախագահ Ռ. Քոչարյան  
26 մայիսի 2007 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 մայիսի 2007 թվականի N 591-Ն

**ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1800-Ն որոշման N 1 հավելվածի 136-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման անհատական չափաքանակները սահմանելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ս. Սարգսյան**

2007 թ. մայիսի 23  
Երևան

Հավելված  
ՀՀ կառավարության 2007 թվականի  
մայիսի 17-ի N 591-Ն որոշման

**Կ Ա Ր Գ**

# ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՑԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման անհատական չափաքանակները սահմանելու հետ կապված հարաբերությունները:

2. Օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման անհատական չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր պետական մարմին)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա (այսուհետ՝ հաշվետու տարի) համար սահմանված ընդհանուր չափաքանակի հիման վրա:

3. Անհատական չափաքանակները սահմանվում են հիմնական և լրացուցիչ փուլերով: Անհատական չափաքանակների սահմանման լրացուցիչ փուլն իրականացվում է այն դեպքում, երբ հաշվետու տարվա համար սահմանված օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման ընդհանուր չափաքանակների և անհատական չափաքանակների սահմանման հիմնական փուլում սահմանված անհատական չափաքանակների գումարային մեծության միջև առաջանում է դրական տարբերություն: Անհատական չափաքանակների սահմանման լրացուցիչ փուլի իրականացման դեպքում լիազոր մարմինը սույն կարգի 6-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում է համապատասխան հայտարարություն՝ առնվազն 2000 օրինակ տպաքանակ ունեցող հայալեզու օրաթերթում և լիազոր մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում, ընդ որում լրացուցիչ փուլի համար նախատեսված չափաքանակների վերաբերյալ տեղեկատվությունն ինտերնետային կայքում թարմացվում է՝ այդ չափաքանակի յուրաքանչյուր փոփոխությունից անմիջապես հետո:

**(3-րդ կետը լրաց. 29.07.16 N 809-Ն)**

4. Ներմուծողն անհատական չափաքանակներ ստանալու համար (լրացուցիչ և հիմնական փուլերում) լիազոր պետական մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) Հայաստանի Հանրապետություն օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի տրամադրման մասին հայտ (այսուհետ՝ հայտ)՝ համաձայն N 1 ձևի,

2) իրավաբանական անձինք՝ պետական գրանցման վկայականի պատճենը, իսկ ֆիզիկական անձինք՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

## II. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԸ

5. Ներմուծողն անհատական չափաքանակների սահմանման հիմնական փուլում չափաքանակ ստանալու համար հայտը լիազոր պետական մարմին է ներկայացնում մինչև հաշվետու տարվան նախորդող տարվա հուլիսի 30-ը:

6. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված ժամկետի ավարտից հետո 30 օրացուցային օրվա ընթացքում լիազոր պետական մարմինն ընդունված հայտերից յուրաքանչյուրի վերաբերյալ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) հայտն ամբողջությամբ բավարարելու և հայտատուին անհատական չափաքանակ տրամադրելու մասին,
- 2) հայտը մասնակիորեն բավարարելու և հայտատուին անհատական չափաքանակ տրամադրելու մասին,
- 3) անհատական չափաքանակի տրամադրումը մերժելու մասին:

7. Սույն կարգի 6-րդ կետով նախատեսված ժամկետի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը հայտատուին գրավոր տեղեկացնում է հայտի վերաբերյալ ընդունված որոշման մասին, և՝

1) սույն կարգի 6-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված որոշումների ընդունման դեպքում տրամադրում է չափաքանակը՝ համաձայն N 2 ձևի,

2) սույն կարգի 6-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում նշված որոշումների ընդունման դեպքում տրամադրում է չափաքանակի տրամադրումը մերժելու կամ հայտը մասնակիորեն բավարարելու մասին որոշման գրավոր հիմնավորումը:

8. Եթե անհատական չափաքանակների տրամադրման հիմնական փուլում ներկայացված հայտերով խնդրարկվող՝ օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման գումարային քանակությունը գերազանցում է հաշվետու տարվա համար սահմանված օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման ընդհանուր չափաքանակի քանակությունը, ապա անհատական չափաքանակները տրամադրվում են մասնակիորեն, համամասնության սկզբունքով: Սույն կետում նշված՝ մասնակիորեն տրամադրված անհատական չափաքանակների գումարային քանակությունը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման ընդհանուր չափաքանակը:

## III. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈՒԸ

9. Անհատական չափաքանակների սահմանման լրացուցիչ փուլն իրականացվում է, եթե ներմուծման ընդհանուր չափաքանակը չի սպառվել անհատական չափաքանակների սահմանման հիմնական փուլի ավարտից հետո:

Անհատական չափաքանակների սահմանման լրացուցիչ փուլում չափաքանակները տրամադրվում են անհատական չափաքանակների սահմանման հիմնական փուլի համար սույն կարգով նախատեսված ընթացակարգով, բացառությամբ հայտերից յուրաքանչյուրի վերաբերյալ որոշումների ընդունման ժամկետի: Անհատական չափաքանակների սահմանման լրացուցիչ փուլում չափաքանակ ստանալու համար ներկայացված հայտերից յուրաքանչյուրի վերաբերյալ լիազոր պետական մարմինը հայտն ստանալուց հետո 5 աշխատանքային

օրվա ընթացքում ընդունում է սույն կարգի 6-րդ կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված որոշումներից մեկը: Որոշումն ընդունելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր պետական մարմինը հայտատուին գրավոր տեղեկացնում է հայտի վերաբերյալ ընդունված որոշման մասին:

**(9-րդ կետը լրաց. 29.07.16 N 809-Ն)**

10. Ներմուծողն անհատական չափաքանակների սահմանման լրացուցիչ փուլում չափաքանակ ստանալու համար հայտը լիազոր պետական մարմին կարող է ներկայացնել անհատական չափաքանակների սահմանման հիմնական փուլի ավարտից հետո՝ մինչև հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը ներառյալ կամ ընդհանուր չափաքանակի սպառումը:

**(10-րդ կետը լրաց. 29.07.16 N 809-Ն)**

10.1. 2013 թվականի համար, բացառության կարգով, անհատական չափաքանակի (քվոտայի) ձեռքբերման առաջին փուլի ավարտը սահմանել 2013 թվականի հունիսի 1-ը:

**(10.1-ին կետը լրաց. 25.04.13 N 413-Ն)**

11. **(կետն ուժը կորցրել է 29.07.16 N 809-Ն)**

**IV. ՀԱՅՏԻ ՄԵՐԺՈՒՄԸ**

12. Անհատական չափաքանակի (լրացուցիչ և հիմնական փուլերում) տրամադրումը կարող է մերժվել, եթե՝  
1) երկիրը, որտեղից արտահանվելու են օգոնային շերտը քայքայող նյութերը, չի հանդիսանում Մոնրեալի արձանագրության (դրա համապատասխան ուղղման) կողմ,  
2) հաշվետու տարվա համար սահմանված՝ օգոնային շերտը քայքայող նյութերի ընդհանուր չափաքանակն սպառվել է:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Ս. Թոփուլյան**

**ՁԼ N 1**

**Հ Ա Յ Տ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՍՈՒԾՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՓԱՔԱՆԱԿԻ ՏՐԱՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

(հայտատուի տվյալները (կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և բնակության վայրը)

Սույնով խնդրում եմ տրամադրել 200 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետություն օգոնային շերտը քայքայող՝ ստորև նշված նյութերը ներմուծելու անհատական չափաքանակ՝  
1) ընդամենը՝ օգոնային շերտը քայքայող քիմիական նյութեր (մաքուր նյութի հաշվարկով).

NN ը/կ	Օգոնային շերտը քայքայող նյութը				Ներմուծման անհատական չափաքանակի՝ խնդրարկվող քանակությունը (կգ)
	անվանումը	քիմիական բանաձևը	միջազգային տեխնիկական անվանումը	առևտրային անվանումը	
1	2	3	4	5	6
1.					
2.					
3.					
4.					

2) 1-ին կետում նշված քանակության սահմաններում Հայաստանի Հանրապետություն կներմուծվեն օգոնային շերտը քայքայող՝ ստորև նշված մաքուր նյութերը և օգոնային շերտը քայքայող նյութերի խառնուրդները՝

ա. մաքուր տեսքով ներմուծվող օգոնային շերտը քայքայող նյութեր.

NN ը/Կ	Օգոնային շերտը քայքայող նյութը				Ներմուծման անհատական չափաքանակի՝ խնդրարկվող քանակությունը (կգ)	Երկիրը, որտեղից արտահանվելու է
	անվանումը	քիմիական բանաձևը	միջազգային տեխնիկական անվանումը	առևտրային անվանումը		
1	2	3	4	5	6	7
1.						
2.						
3.						
4.						

բ. օգոնային շերտը քայքայող նյութերի խառնուրդներ.

NN ը/Կ	խառնուրդի առևտրային անվանումը	խառնուրդում պարունակվող՝ օգոնային շերտը քայքայող յուրաքանչյուր նյութի		Ներմուծվելիք խառնուրդի ընդհանուր քանակությունը (կգ)	Օգոնային շերտը քայքայող նյութի ներմուծման անհատական չափաքանակի՝ խնդրարկվող քանակությունը (կգ)	Երկիրը, որտեղից արտահանվելու է
		միջազգային տեխնիկական անվանումը (և (կամ) քիմիական բանաձևը)	տեսակարար կշիռը (%)			
1	2	3	4	5	6	7
1.		_____	_____	_____	_____	
2.		_____	_____	_____	_____	
3.		_____	_____	_____	_____	
4.		_____	_____	_____	_____	

(հայտատուի (իրավաբանական անձի ղեկավարի)  
անունը, ազգանունը կամ ֆիզիկական անձի  
անունը, ազգանունը)

**ՀՀ քննապահականության նախարարության նշումների համար**

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
Հայտն ընդունված է 200 թվականի \_\_\_\_\_-ին **Կ.Տ.**

**Ձև N 2**

**ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՓԱՔԱՆԱԿ N \_\_\_\_\_**

Տրված է \_\_\_\_\_  
(ներմուծողի տվյալները (կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը և բնակության վայրը))

այն մասին, որ նրա կողմից 200 թվականի հունվարի 1-ից մինչև 200 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում կարող է Հայաստանի Հանրապետություն ներմուծել օգոնային շերտը քայքայող հետևյալ նյութերը՝ ստորև նշված քանակություններով.

NN ը/կ	Օգոնային շերտը քայքայող նյութը			Ներմուծման անհատական չափաքանակը՝ մաքուր նյութի հաշվարկով (կգ)
	անվանումը	քիմիական բանաձևը	միջազգային տեխնիկական անվանումը	
1	2	3	4	5
1.				
2.				
3.				
4.				
5.				

Օգոնային շերտը քայքայող նյութերի նշված քանակությունը կարող է ներմուծվել մեկից ավելի խմբաքանակներով:  
Լիազոր պետական մարմնի ղեկավար

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

\_\_\_\_\_  
(անունը, ազգանունը)

Տրված է \_\_\_\_\_ 200 թ.

**Կ.Տ.**  
**(հավելվածը լրաց., փոփ. 25.04.13 N 413-Ն, 29.07.16 N 809-Ն)**